

մասը կը կտրէր: Կար կարեւոր ուղին Աբա-
մէաէն Կեսարիոյ վրայով Մալաթիա իջնող,
որ Մալաթիայէն Տոխսայի մօտ Եփրատը
կ'անցնէր անկէ մտնելու համար Հայաստան:
Ասիկա ճանապարհակոծող մըն էր որմէ կը
ճիւղաւորուէին ուրիշներ Հայաստանի, Պարս-
կաստանի եւ Միջագետքի դանազան կողմերը
տանող:

Յաւալի է որ մեր հին հայ պատմիչները
մինչեւ միջին դարերը հայ առեւտրական քա-
ղաքներու փարթամութեանց մասին խօսած ա-
տենինն ոսկիէ եւ արծաթէ դատ ուրիշ բան յի-
շելու չեն զիջանի՜ր՝ մոռնալով մետաքսի, գոր-
գի, ներկի, աղած ձուկի, մորթի, մետաղէ
իրերու, հիւսուածեղէններու հայկական մե-
ծաճարուստ եւ կարեւոր արտադրողական եւ
վաճառականական նիւթերը, որոնք, սակայն,
Հայաստանի եւ հայոց հարստութեան գլխաւոր
նիւթերը կը կազմէին:

Ժ. դարուն Իպն Հաուզալ կը վկայէ, որ Է
Պէրտա «կան նաեւ թթենիներ եւ մետաքս կը
խրկուի ասիէ Պուղիստան եւ Իրազ: Աղուանից
այս քաղաքը պէտք է մաս նկատել մեծն Հայոց
սահմաններուն:

Ասիէ վերջ գրեթէ մինչեւ ԺԵ. դար մեր
մօտ վիպաութիւններ կը պակսին ուղղակի մե-
տաքսի արտաձման համար: Բազմիցս մեր միջ-
նադարեան մատենագրաց, պատմագրաց, ժա-
մանակագրաց, առանձին յիշատակարաններու
եւ նոյնիսկ պատմական բանաստեղծութեանց
մէջ կը յիշուին հայ վաճառականները եւ Է-
րենց աշխարհածաւալ թափառումները, սա-
կայն, շատ քիչ վիպաութիւններ կան, այն ալ
անուանական, պատահական, այդ վաճառա-
կաններու առեւտրական նիւթերուն մասին:

Ուրեմն, ստիպուած կը դիմենք օտար աղ-
բիւրներու գոնէ մասնակի պատկեր մը ստանա-
լու համար: Մարքօ Բօլօ կը վկայէ, որ Հայա-
կիլիկիոյ «ծովեղբերքին վրայ, Այաս անունով
քաղաք մը կայ, որ առեւտուրի մեծ կեդրոն է,
որովհետեւ դուն պէտք է դիմաստ ճշմարտու-
թիւնը թէ բոլոր համեմները եւ մետաքսէ ու
ոսկիէ դիպակները եւ ամէն տեսակ թանկագին
ապրանքները ներսերէն հոն կը բերուին, եւ
Վենետիկցի, ձենովացի նաեւ ուրիշ երկիրնե-
րու վաճառականները հոն կը յաճախեն, կը

գնեն ատոնք ու կը տարածեն աշխարհի ամէն
կողմը»: (1) Հոս գործածուած ներսերէնով
պէտք է հասկնալ Մեծ Հայաստան, Պարսկաս-
տան եւ նոյնիսկ Պուխարայ, Հնդկաստան, Զի-
նաստան, նաեւ Կասպեան բոլոր երկիրները,
ուրիշ, ըստ Մարքօ Բօլօի, ամէն տեսակ բնիկ
ապրանքներ կ'արտահանուէին Այաս՝ ուր իբր
կեդրոնական մեծ շուկայ մը Եւրոպացի, Վենե-
տիկցի, ձենովացի, Բիզացի, Ֆլորենացի, Ռա-
կուպացի, Սպանիացի վաճառականները կու-
զային իրենց երկիրն յատուկ պահանջները գը-
նելու: Բնական է թէ ներսերէն բերելու եւ թէ
Այասի մէջ ծախելու կամ անկէ նոյնիսկ Եւրո-
պա, Բիզանդիոն կամ Եգիպտոս արտահանե-
լու գործին մէջ հայերը շատ խոշոր դեր կը
խաղային: Հայ վաճառականական կարեւոր
գաղութներ կային միջնադարեան Եւրոպայի
բոլոր առեւտրաշահ քաղաքներուն մէջ, ոչ մի-
այն Վենետիկի կամ ձենովայի նման կեդրոն-
ներ, այլ նոյնիսկ հեռուոր Լիզպոնայի կամ
Բրիւսի նման շուկաներ ունէին հայ առեւտրա-
կան գաղութներ, որոնք կապուած էին Այասի
հետ ինչպէս նաեւ իրարու հետ, այդպէսով
հայ վաճառականական ցանցը տարածելով
Պրիմէն մինչեւ Բորդուկալ, Կիպրոսէն մինչեւ
հիւսիսային Բրիւս, կամ Պալքաններու, Կեդ-
րոնական Եւրոպայի ամէն կողմը, Կ. Պոլսէն
մինչեւ Եգիպտոս, մինչեւ Հապէչխտան:

Իժուար չպիտի ըլլայ ըսել, թէ Այաս բեր-
ուած եւ անկէ արտահանուած մետաքսեղէն-
ները կը բերուէին թէ մերձաւոր եւ թէ հեռա-
ւոր արեւելքէն: Յայտնի չէ թէ ԺԱ. դարէն
մինչեւ ԺԳ դար Հայակիլիկիա կ'արտադրէ՞ր
մետաքս: 1232-ին ուղեգիր Burchard կը վկա-
յէ որ Լիրանանի ծովեղբերքին վրայ հայկական
Ալէքսանտրէզէն (Իսկէնտէրուն) շատ քիչ հե-
ռու Տրիպոլսոյ նաւահանդիստ քաղաքը «լե-
ցուն է բնակչութեամբ, որովհետեւ հոն կը
բնակին Յոյներ եւ Լատիններ, Հայեր, Մարօ-
նիդներ եւ Նեստորականներ եւ շատ ուրիշ
(ազգութիւններ): Մետաքսի շատ գործ կը կա-
տարուի հոն: Իբր ճշմարտութիւն իմացած եմ
որ հոն կան ոստայանակներ մետաքսի եւ մե-

(1) The Travels.—The Viking press. New York, 1931, p. 19: